Արձանագրություն N 2

Երևանի քաղաքային աղբավայրի տարածքում ցանկապատի, պահակակետի, լվացման կետի և ախտահանման տաշտակի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման ԵՔ-ԳՀԾՁԲ-19/139 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

22.07.2019թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Կիրակոսյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Սարգսյան /գնահատող/, Ա. Հովհաննիսյան /գնահատող/
Ա. Հարությունյան /բացող/, Կ. Հարությունյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/139 » ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

(Ա. Կիրակոսյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2019 թվականի հուլիսի 22-ին, ժամը 12:00-ին, Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/139 » ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Ա. Կիրակոսյան)

Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

h/h	Մասնակիցների անվանումը
1	«Բագարանի բարիք» ՓԲԸ
2	Իրտիգ ՍՊԸ
3	Սուֆետ ՍՊԸ
4	ԳՈԼԴ-ՆԵԹ ՍՊԸ
5	Էյ Վի Էն Գրուպ ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Ա. Կիրակոսյան)

Ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

Երևանի քաղաքային աղբավայրի տարածքում ցանկապատի, պահակակետի, լվացման կետի և ախտահանման տաշտակի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ				
Մասնակցի անվանումը	Նախահաշվային գինը	Առաջարկած գինը		
		Արժեքը	ԱԱՀ	Ընդհանուր
«Բագարանի բարիք» ՓԲԸ	913600	350000		350000
Իրտիգ ՍՊԸ		390000	78000	468000
Սուֆետ ՍՊԸ		500000	100000	600000
ԳՈԼԴ-ՆԵԹ ՍՊԸ		588900		588900
Էյ Վի Էն Գրուպ ՍՊԸ		690000		690000

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

4. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Ա. Կիրակոսյան)

4.1 Մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ ԳՈԼԴ-ՆԵԹ ՍՊԸ-ի: Մասնակցի կողմից նշված փաստաթղթերում, այդ թվում գնային առաջարկում, նշված է «ԳՈԼԴ-ՆԵԹ ՍՊԸ-ի տնօրեն Սամվել Մելիքսեթյան», փաստաթղթերը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատվել է Սամսոն Մարգարյանի կողմից, սակայն հայտում բացակայում է Սամսոն Մարգարյանին այդ լիազորությունը վերապահելու վերաբերյալ փաստաթուղթը /լիազորագիրը/: Գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել ԳՈԼԴ-ՆԵԹ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ ղեկավարվելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 41-րդ կետի պահանջով:

4.2 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել են հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Բագարանի բարիք» ՓԲԸ	Բավարար
Իրտիգ ՍՊԸ	Բավարար
Սուֆետ ՍՊԸ	Բավարար
ԳՈԼԴ-ՆԵԹ ՍՊԸ	Անբավարար
Էյ Վի Էն Գրուպ ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

5. Ընթացակարգի 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակիցների մասին

(Ա. Կիրակոսյան)

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/139» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Բագարանի բարիք» ՓԲԸ -ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, 2-րդ տեղ՝ Իրտիգ ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

6. Պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին ծանուցելու մասին

(Ա. Կիրակոսյան)

6.1 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել պետական եկամուտների կոմիտե:

6.2 Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

7. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Կիրակոսյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 6-րդ կետում նշված փաստաթղթերի գնահատման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 11:20-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ա. Կիրակոսյան

Անդամներ՝ _____ Կ. Հարությունյան

_____ Ա. Սարգսյան

_____ Ա. Հովհաննիսյան

_____ Ա. Հարությունյան

Քարտուղար՝ _____ Ա. Համբարձումյան